«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ Պատմություն

ԴՊՐՈՑ՝ Երևանի հ. 120 հիմնական դպրոց

Մասնակից՝ Լիլիթ Նահապետյան

Ղեկավար՝ Արմինե Սաֆարյան

Թեմա՝ *Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասավանդման ընթացքում*

Երևան, 2023թ.

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Արժեք/Դիրքորոշում----------7

3. Արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին-------12

4. Սովորողների հետ աշխատանքի արդի մեթոդների և տեխնոլոգիաների համակարգը՝ որպես պատմության դասագործընթացի դաստիարակչական գործառույթի իրագործման արդյունավետ միջոց----------20

5. Եզրակացություն----------24

6. Առաջարկություններ----------26

7. Օգտագործված գրականության ցանկ----------29

Կան կուռքեր,

որ պիտի իջեցվեն պատվանդաններից,

և կան արժեքներ,

որ պիտի ելնեն պատվանդան:

Գարեգին Նժդեհ

Ներածություն

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները:

«Հայոց պատմություն» դասընթացը յուրահատուկ հայացք է՝ ուղղված դեպի հայրենիքը, նրա սահմանները, պատմությունը, ավանդույթները, անցյալի և ներկայի մշակութային էջերը:

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի հոլովույթում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Այն հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության:

Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցություն ու մտածողություն, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող անձ ու քաղաքացի:

Հետևաբար սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման աշխատանքները ուսումնառության ընթացքում պետք է հիմնված լինեն առարկայական ծրագրի չորս հիմնական հասկացությունների շուրջ՝ *պետություն, ինքնություն, մշակույթ, համակեցություն*:

21-րդ դարը հումանիզմի դրսևորման, տեխնիկական առաջընթացի, գիտական ուսումնասիրությունների, տեղեկատվության մեծ հոսքի և զարգացման մի դարաշրջան է, որտեղ ձևավորվում, դաստիարակվում և զարգանում է մերօրյա էթնոկիրը: Գնալով ավելի է կարևորվում դպրոցի, մանկավարժի դերը մատաղ սերնդի դաստիարակության, հասարակության վաղվա օրվա մեջ նրա ինքնադրսևորման, ինքնահաստատման, իր երկրի ապագայի կարևորությունը գիտակցելու գործում: Ինպիսի՞ն է ժամանակակից սերունդը, ի՞նչ պահանջմունքներ, հետաքրքրություններ ունի, ինչպիսի՞ արժեհամակարգով է առաջնորդվում: Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր սերունդ ունի իր կատարելատիպը, ըստ որի էլ չափվում են արժեքներն ու նպատակները: Սերունդներն օղակ են անցյալի և ապագայի միջև և ապահովում են ինչպես տվյալ ժամանակաշրջանին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ՝ փոփոխումը: Անձի ձևավորման, նրա սոցիալականացման գործընթացը պատմական տարբեր ժամանակներում տարբեր է եղել՝ պայմանավորված տարատեսակ հանգամանքներով, տվյալ ժամանակին բնորոշ պատմական իրադարձություններով և մարդկային մտածելակերպի բարդ ու անկառավարելի փոփոխություններով:
Այս տեսանկյունից 21-րդ դարն էլ բացառություն չէ: Անկախացման տարիներին Հայաստանին պատուհասած երկրաշարժը, Արցախյան գոյամարտը, սոցիալ-տնտեսական ճգնաժամը, 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմը, 2020թ. 44-օրյա պատերազմը և քաղաքական արտաքին ու ներքին բազում գործոններ ունեցան և ունենում են իրենց տխուր հետևանքները՝ պարարտ հող ստեղծելով բացասական տարաբնույթ երևույթների աշխույժ գործունեության համար: Նման մարտահրավերների առկայության պայմաններում երիտասարդ սերնդի՝ նախնիներից ժառանգած արժեհամակարգի մասին մակերեսային գիտելիքների կամ բացարձակ չիմացության

հետևանքով ազգային արժեքները հաճախ մղվում են երկրորդական պլան. դյուրին և հեշտընկալ դարձնում համաշխարհայնացման կործանարար պահանջները: Վերջիններս բացասական ազդեցություն են ունենում երիտասարդ սերնդի ինքնության, կենսակերպի ու արժեհամակարգի վրա: Ի տարբերություն նախորդ դարաջրջանի՝ մերօրյա ազգային առաքինություններից շատերն այլ ընկալում են ձեռք բերել, փոխվել են նաև արժեքային պատկերացումները: Այսինքն էթնոմշակութային առանձնահատկությունները որոշ չափով մղվել են հետին պլան՝ վտանգելով և մշակութային ինքնությունը խոցելի դարձնելով արտաքին տեղեկատվության համար: Հետևաբար, արդի մարտահրավերների պայմաններում պետականության ամրապնդման համար չափազանց կարևոր է ոչ միայն ժամանակակից, քաղաքական, տնտեսական և շուկայական հարաբերություններն ու օրենքներն ըմբռնող, այլև ազգային մտածողություն ու հայեցի դաստիարակություն ունեցող սերնդի կերտումը: Այսօրինակ իրավիճակներում անփոխարինելի է սոցիալական տարբեր ինստիտուտների դերակատարությունն ազգային-ավանդական արժեքների պահպանման, փոխանցման գործում: Վերջիններս այն հենասյուներն են, որոնք ապահովում են մտավոր ներուժով հարուստ սերունդ ունենալու, ազգային և համամարդկային մշակութային արժեքները պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու, արժեքային կայուն հայացքներ ունեցող, ազգին նվիրված քաղաքացիներ դաստիարակելու, կրթելու գործընթացը: Ինչպես նշում է գերմանացի գիտնական Դյուրկհեյմը, «հիշյալ սոցիալական ինստիտուտների հիմնական նպատակը տիրող մշակութային արժեքների փոխանցումն է», որով երեխան ոչ միայն ձևավորվում ու զարգանում է, այլև հարմարվում է հասարակական կյանքին՝ ձեռք բերելով անհրաժեշտ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վարքագծային նորմեր, ծանոթանալով և յուրացնելով ազգային և համամարդկային մշակույթը:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի նաև հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի ու համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը: Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է, որ ազգային դպրոցներն առաջ երթան»: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժներով: Հետևապես ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Արժեք/Դիրքորոշում

...Չի կարելի փոքրիկ մարդու հոգևոր աշխարհը հանգեցնել միայն ուսման:
Եթե մենք ձգտենք այն բանին, որ երեխայի բոլոր ուժերը կլանվեն դասերով,
կյանքը նրա համար կդառնա անտանելի:
Նա պետք է լինի ոչ միայն դպրոցական, այլև ամենից առաջ մարդ՝
իր բազմակողմանի հետաքրքրություններով, պահանջմունքներով, ձգտումներով:
Սուխոմլինսկի

Արժեքը աշխարհի յուրահատուկ ընկալումն է, որը ձևավորվում է ոչ միայն ձեռք բերված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:
Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարևորում ենք արժեքների ձևավորումը գալիք սերնդի մոտ և միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում:
Արժեքը երևույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք և այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել:
Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձևավորվում է դրանց շնորհիվ: Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի: Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլև անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում:
Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ: *Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է*:
Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը և չի հակասում դրանց, անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին և բերում է դրանց քայքայման:
Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը:
Ինչպես ասել է Մեծն Նժդեհը՝ «Ոչինչ արժեն նյութեղեն ամրությունները մի երկրի

համար, եթե նրա որդիների սրտերը բարոյական բերդեր չեն» (Հիշիր Պատերազմը):
Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:
Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա և՛ ցավ, և՛ ուրախություն, ունենա թե՛ դժվարություններ, թե՛ հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը և ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտություններ:
Մեր երկրում աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ Հանրակրթության պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը:
«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:
Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան,

կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարակության ու կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները: Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին գոյությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը:

Երեխաների մեծ մասը հանրային տիրույթի հետ առաջին շփումն ու առնչությունն են ունենում դպրոցում, և դպրոցը պետք է լինի այն վայրը, որտեղից սկսվում է ժողովրդավարական կրթությունը:

Սովորողը պետք է տիրապետի որոշակի գիտելիքների և դիրքորոշում ունենա ներքոհիշյալ հարցերի շուրջ՝

- Քաղաքացիական դիրքորոշում
- Ժողովրդավարական տարբեր հարցերի մասին հստակ դիրքորոշում
- Ժողովրդավարական մշակույթ
- Ժողովրդավարություն
- Մարդկային արժանապատվություն և մարդու իրավունքներ
- Մշակութային բազմազանություն
- Իրավունքի գերակայություն
- Օրենքի գերակայություն, արդարադատություն
- Հավասարություն, արդարություն

Ժողովրդավարական կրթության մասնակիցը լինելու համար վճռորոշ է արժեքների երեք խումբ՝

- Մարդկային արժանապատվության և մարդու իրավունքների արժևորում.

արժեքների այս առաջին խումբը հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ բոլոր անհատներն ունեն հավասար արժեք ու հավասար արժանապատվություն, հավասար հարգանքի արժանանալու և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նույն շարքից օգտվելու իրավունք, և պետք է համապատասխան վերաբերմունքի արժանանան։

- Մշակութային բազմազանության արժևորում.

արժեքների երկրորդ խումբը հիմնված է այն ընդհանուր համոզմունքի վրա, որ հարկ է դրական վերաբերել, գնահատել ու փայփայել այլ մշակութային պատկանելիություններին, մշակութային փոփոխականությանն ու բազմազանությանը և տեսակետների, կարծիքների ու գործելակերպերի բազմազանությանը։

- Ժողովրդավարության, արդարադատության, արդարության, հավասարության և իրավունքի գերակայության արժևորում. արժեքների երրորդ խումբը հիմնված է մի խումբ համոզմունքների վրա առ այն, թե հասարակություններն ինչպես պետք է գործեն և կառավարվեն։

Վերաբերմունքը ընդհանուր առմամբ հոգեբանական կողմնորոշումն է, որ անհատը որդեգրում է ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի նկատմամբ (օր.՝ անձ, խումբ, ինստիտուտ, հարց, իրադարձություն՝ արտահայտելով համոզմունք և կարծիք, հույզ կամ զգացողություն, գնահատական՝ դրական կամ բացասական).

- Անկանխակալ մոտեցում այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ
- Հարգանք
- Պատասխանատվություն
- Ինքնավստահություն
- Հանդուրժողականություն

Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով և մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Արժեքը համոզմունք է այն ցանկալի նպատակի վերաբերյալ, որը մոտիվացնում է գործողություն և ծառայում է որպես կյանքի ուղղորդող սկզբունք բազմաթիվ իրավիճակներում: Արժեքներն ունեն նորմատիվ պարտադրողական բնույթ առ այն, թե ինչ պետք է անել կամ մտածել: Արժեքներն առաջարկում են չափանիշներ կամ չափորոշիչներ հետևյալի համար՝ գնահատականներ տալ, կարծիքների հիմնավորում, մոտեցումներ և վարվելակերպ, վարքագծի պլանավորում և այլընտրանքների միջև ընտրություն, մյուսների վրա ներազդելու փորձ և սեփական «ես»-ի ներկայացում մյուսներին:

Բայցևայնպես, արժեքները պարզապես անհատական գծեր չեն, այլ սոցիալական համաձայնություններ այն մասին, թե ինչն է ճիշտ, լավ կամ ինչը պետք է «փայփայել»:

Արժեքային համակարգի ձևավորումը Հայոց պատմության դասերին

Մարդու մեջ բարությունը ձեռքբերովի է, հետևաբար մարդը կարող է ձեռք բերել նաև չարություն, ինչպես որ օդը արածագի ժամանակ կարող է ստանալ լույս և լուսավորել, իսկ արևամուտից հետո կորցնում է այն և խավարում:

Դավիթ Անհաղթ

Փորձենք հասկանալ թե ինչպե՞ս է ձևավորվում ազգային արժեքային համակարգը Հայոց պատմության դասերին: Չէ՞ որ Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալու իրականացնելու իղձերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն:

Ուսումնառության հայեցակարգ

«Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է: Առարկան նպաստում է պետականակիր գիտակցություն, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը պատմության խորապատկերում գիտակցող քաղաքացու զարգացմանը, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացու ձևավորմանը:

Հիմնական սկզբունքներ

- ✓ զարգացնել սովորողի մոտ ազգային-պետական արժեքային համակարգը, ձևավորել պետականակիր արժեհամակարգ ունեցող քաղաքացու,
- ✓ ձևավորել հարատև ուսումնառող քաղաքացու և անձի, ով կկարողանա անդադար փոփոխվող արդի աշխարհում ինքնահաստատվել,
- ✓ սովորողը վեր է հանելու այն խնդիրները, որի հետ առնչվում է առօրյայում և հիմնվելով ձեռք բերված ուսումնական փորձառության վրա գտնել լուծման նորարար եղանակներ:

Կարողունակությունը անհատի համալիր բնութագրիչ է. այն գիտելիքների, հմտությունների, վերաբերմունքի և արժեքների համակարգ է, որը թույլ է տալիս այս կամ այն ոլորտում հաջողությամբ լուծելու որոշակի խնդիրներ:



Հանրակրթության պետական նոր չափորոշչի հիմքում ընկած են ութ առանցքային կարողունակություններ, որոնցից առարկայի միջոցով արժեհամակարգ ձևավորելու համար կառանձնացնեմ հատկապես ներքոհիշյալները.

Ինքնաճանաչողական և սոցիալական

- ✓ ընդունակ են ինքնանդրադարձման և ինքնակազմակերպման միջոցով ձգտել ինքնաճանաչման,
- ✓ ձևավորում են վստահություն սեփական ուժերի և կյանքի հանդեպ և հաջողությամբ կառավարում են սեփական ժամանակը, գիտելիքներն ու հմտությունները, կարողանում են դրսևորել առողջ և անվտանգ կենսակերպ, ինչպես նաև մասնագիտական կողմնորոշում,
- ✓ դրսևորում են հարգանք, ազնվություն և պատասխանատվություն ինչպես սեփական անձի, այնպես էլ այլոց հանդեպ՝ անկախ տարիքից, սեռից, ազգությունից, բարեկեցության աստիճանից, արտաքին տեսքից, ընդունակություններից, մասնագիտությունից, համոզմունքներից և այլ առանձնահատկություններից,
- ✓ սոցիալական հարաբերություններում գործում են կառուցողական և համերաշխ, դրսևորում են ընկերակցելու ունակություն և կոնֆլիկտի խաղաղ և համագործակցային կարգավորման հմտություններ:

Ժողովրդավարական և քաղաքացիական

- ✓ նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը,
- ✓ ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում են ՀՀ Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում,
- ✓ արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում են սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք,
- ✓ ճանաչում են հասարակության կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում են նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն:

Մշակութային

- ✓ ճանաչում են հայ մշակույթն ու մարդկային քաղաքակրթությունների մշակութային բաղադրիչները՝ որպես մարդկային զգացմունքների և գործողությունների կողմնորոշիչներ,
- ✓ արժևորում են սեփական ինքնությունը, ընտանիքի, համայնքի և պետության դերը,
- ✓ ձևավորում են սեփական նախասիրություններ ազգային և համաշխարհային մշակութային ժամանակաշրջանների ուսումնասիրության ընթացքում,
- ✓ ի վիճակի են զարգացնել սեփական մշակութային ու գեղագիտական պատկերացումները՝ արժևորելով հոգևոր և նյութական ժառանգությունն ու մշակութային բազմազանությունը, ճանաչելով հայ և համաշխարհային

գրականությունն ու արվեստը և ձևավորելով մշակութային գրագիտություն և ճաշակ:

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է՝

- ✓ լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին,
- ✓ կարևորի ազգային-պետական մտածողություն և գործելակերպ ունենալը ու դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք, ունենա ազգային ինքնագիտակցություն,
- ✓ կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը,
- ✓ ունենա արդարության, լավատեսության և պատասխանատվության զգացում,
- ✓ գիտակցի ներկան և ապագան կերտելու խնդրում ազգային պատմության դերը,
- ✓ գիտակցի իր ժողովրդի նյութական և հոգևոր արժեքները պահպանելու անհրաժեշտությունը,
- ✓ գիտակցի, որ կյանքում իր համար կարևորագույն արժեքներից են լինելու գիտելիքները, աշխատանքային հմտությունները, մասնագիտական վարպետությունը և այլն:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, դասղեկական ժամ,

արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Պատմության որակյալ դասի գլխավոր հատկանիշը և, ընդհանրապես պատմության դասավանդմանը ներկայացվող գլխավոր պահանջը գիտական բարձր մակարդակն է, համապատասխանությունը պատմական և մանկավարժական գիտությունների ժամանակակից նվաճումներին, առաջավոր փորձին, ուսումնադաստիարակչական գործընթացի օրինաչափություններին: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ պատմության դպրոցական դասընթացը չի ընդգրկում պատմության պատմական գիտության բոլոր նվաճումները: Ոչ մի դեպքում չի կարելի թույլ տալ պատմության դպրոցական դասընթացի բարդացում և սովորողների ծանրաբեռնում արտածրագրային նյութերով:

Դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի բնորոշ հատկանիշ է ուսումնական նպատակի հստակությունը, դաստիարակող և զարգացնող խնդիրների անխզելի կապը և այդ խնդիրների հստակ և հետևողական իրագործումը:

Ուսումնական ծրագրի բովանդակությունը, դասի ուսումնական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները, աշակերտների տարիքը, նրանց գիտելիքների մակարդակը, հմտություններն ու կարողությունները համատեղ պայմանավորում են նյութի ընտրությունը, դրանում գլխավորի առանձնացումը, ինչպես նաև դասի ժամանակ ուսուցչի օգտագործած մեթոդներն ու հնարները:

Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստակամությունը դժվարությունները հաղթահարելու գործում ձևավորում են համառություն, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ:

Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն

երևալու ձգտումը, մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Պատմության ուսուցման գործընթացում, ընդհանրապես դպրոցական պրակտիկայում հանդիպում ենք տարբեր տիպի դասերի, որոնք ունեն իրենց տարբեր հիմքերը, ուսումնադաստիարակչական նպատակը: Դասերի տիպերի դասակարգման շատ տարբերակներ ունեն ընդհանուր բնույթ: Դրանց հիմքում ընկած են հիմնական նպատակներ, պատրաստի գիտելիքների յուրացումը, կրկնության միջոցով դրանց ամրապնդումը, գիտելիքների կիրառումը պրակտիկայում, կարողությունների և հմտությունների ձևավորման նպատակով կատարվող վարժությունները, ընթացիկ կամ ընդհանրացնող կրկնությունները, սովորողների ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ու կարողությունների ստուգումը և այլն: Դիդակտիկական և մեթոդական գրականության մեջ կան տարբեր տիպի դասերի նկարագրություններ և դրանց կառուցվածքի սահմանումներ:

Հայոց պատմություն առարկայի ուսուցման նպատակները բազմազան են, որոնց հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ.

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելով պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր իմացությունը կօգնի մեր հանրապետության քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոր սխրանքները:
3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների և համամարդկային նվաճումների հետ: Ծանոթացումը հայրենի երկրի մշակույթին, պատմամշակութային կոթողներին:
4. Ցույց տալ ժողովրդի աշխատասիրությունը, ազատ, խաղաղ և ստեղծագործ աշխատանքի նրա բնածին ձգտումը: Ներարկել սեր և հարգանք աշխատանքի, աշխատավոր և բարիքներ ստեղծող մարդկանց նկատմամբ:
5. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի և կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, վարքի ու բարքի մասին, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել մեր նախնիները, ինչպես են ընտանիք կազմել, սնվել ու հագնվել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին:
6. Բացահայտել պատմամշակութային գործիչների՝ պատմություն կերտողների կյանքն ու գործը: Հասկանալի դարձնել, որ պատմական այդ գործիչների միջոցով են իրականացվում ազգային-հասարակական ձգտումներն ու իդեալները:
7. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից:
8. Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն, անմնացորդ սիրո ու հարգանքի խոր զգացում: Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակին ծառայելը պատվի գործ է:
9. Ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, բնապատմական և պատմամշակութային այն միջավայրը, որտեղ ապրել ու իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը:
10. Հասնել այն բանին, որ իր ժողովրդի հարուստ պատմական փորձով զինված Հայաստանի վաղվա քաղաքացին գիտակցի իր անմիջական մասնակցության

անհրաժեշտությունը ազգային հիմնախնդիրների լուծման, անկախ պետականության կերտման, հայրենիքի բարգավաճման և վերածնության գործին:

11. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ և գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

12. Ձևավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք ու կարողություն:

13. Ձևավորել գիտակից վերաբերմունք համամարդկային գլոբալ հիմնախնդիրների, բնական աղետների, մարդկության ճակատագրի և ապագայի նկատմամբ:

14. Զարգացնել սովորողների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը հաղորդակցական, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները.

- ✓ խթանել սովորողների ճանաչողական ակտիվությունը, մտածողության ինքնուրույնությունը, սեփական գիտելիքներն ինքնուրույն լրացնելու և հարստացնելու կարողությունները,
- ✓ սովորեցնել տեղեկատվության աղբյուրներից օգտվելու, ժամանակակից տեղեկատվական հեղեղի մեջ կողմնորոշվելու, անհրաժեշտ տեղեկությունը ճիշտ ընտրելու, մշակելու, վերաձևակերպելու, այսինքն՝ գիտելիք կառուցելու կարողություններ,
- ✓ ձևավորել պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, վերլուծելու, գնահատելու, վերացարկելու, ընդհանրացնելու և կանխատեսումներ կատարելու կարողություններ,
- ✓ զարգացնել ուսումնառության արդյունքում սովորողների ստացած գիտելիքները և տեսական դրույթները պատմական կենդանի նյութի վրա կոնկրետացնելու անցյալի, ներկայի հասարակական-քաղաքական երևույթների վերլուծության ժամանակ կիրառելու կարողություններ ու հմտություններ,
- ✓ զարգացնել սովորողների զգայական ընկալման, մտավոր և հուզական ճանաչողության բոլոր տեսակներն ու կամային որակները (լսողություն, տեսողություն, կամք, համառություն) և մտավոր գործողությունները (համեմատում, համադրում և այլն):

Սովորողների հետ աշխատանքի արդի մեթոդների և տեխնոլոգիաների համակարգը՝ որպես պատմության դասագործընթացի դաստիարակչական գործառույթի իրագործման արդյունավետ միջոց

Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկում եմ կիրառել այնպիսի մեթոդներ և տեխնոլոգիաներ, որոնք կապահովեն յուրաքանչյուր սովորողի ակտիվ ընդգրկվածությունը ուսուցման գործընթացում և կնպաստեն արժեքային համակարգի ձևավորմանը:

Դասավանդողը, որպեսզի նպատակաուղղված ու ճիշտ աշխատանք կատարի սովորողի մոտ արժեքային համակարգ ձևավորելու ուղղությամբ, անհրաժեշտ է հայտորոշի տվյալ դասարաններում առկա աշակերտների անհատական, որոշակի տարիքային խմբի կողմից արտահայտած հիմնական կարծիքները, անցկացնի քննարկում, կատարի վերլուծություն, որից հետո պլանավորի յուրաքանչյուր դասի ընթացում իրականացվող աշխատանքները, ինչպես նաև արտադասարանական և արտադպրոցական գործունեությունը:

Ուստարվա սկզբին անցկացրել եմ հետազոտություն 7-9-րդ դասարանների 80 աշակերտների շրջանում՝ հայտորոշելու նրանց ներաշխարհը, ունեցած դիրքորոշումը, քիչ թե շատ «տեսանելի արժեքային սերմերը»:

Թիրախ խմբին հարցմանը մասնակցելու համար տրվել է արժեքների (հիմնարար հասկացությունների) ցանկը և ներքոհիշյալ հարցադրումները՝

- Թվարկված արժեքներից ընտրե՛ք տասը հասկացություններ և դասավորե՛ք հաջորդականությամբ ըստ կարևորության ու առաջնայնության:

1. հայրենիք	6. մայրենի լեզու	11. հավատ
2. ընտանիք	7. պատասխանատվություն	12. հավասարություն
3. մշակույթ	8. բարոյականություն	13. ազնվություն
4. ազատություն	9. հանդուրժողականություն	14. աշխատանք
5. արդարություն	10. համագործակցություն	15. հարգանք

1	2	3	4	5	6	7	8	9	10

- Պարզաբանե՛ք ընտրություն կատարելու ձեր սկզբունքը:

Արդյունքները հետևյալն էին՝

	Արժեքներ	Ընդամենը
1	Հայրենիք	74
2	Ընտանիք	76
3	Մշակույթ	35
4	Ազատություն	54
5	Արդարություն	75
6	Մայրենի լեզու	60
7	Պատասխանատվություն	57
8	Բարոյականություն	46
9	Հանդուրժողականություն	30
10	Համագործակցություն	14
11	Հավատ	64
12	Հավասարություն	36
13	Ազնվություն	67
14	Աշխատանք	39
15	Հարգանք	73



Թեմայի շուրջ քննարկում կազմակերպելիս կային աշակերտներ, որոնք խիստ տարբեր, անգամ հակադիր տեսակետներ արտահայտեցին՝ նշելով շքեղ բնակարանի, ավտոմեքենայի, հարստության, պաշտոնի և նման այլ բարիքների կարևորությունը:

Վ. Բեսպալկոն այն համոզմանն է, որ հաղորդվող գիտելիքների նկատմամբ աշակերտների վերաբերմունքն ակտիվացնելու նպատակով դասավանդողը պարտավոր է արթնացնել նրանց բանական և բարոյագիտական զգացումները:

Դասավանդողի կողմից տարաբնույթ ներգործությունների կազմակերպումն իմաստավորվում է սովորողների հուզական ապրումներով: Հույզերն ու զգացումներն արտացոլվում են պատմական իրադարձությունների, փաստերի և երևույթների գնահատմամբ, ժողովրդի վիճակի, հերոսների ու առաջնորդների նկատմամբ սովորողների վերաբերմունքով: Ուստի զգալի է սովորողների հոգեկան ապրումների նշանակությունը պատմական այս կամ այն իրողության նկատմամբ նրանց արժեքային ընկալումը ձևավորելու գործընթացում:

Պատմության դասագործընթացում իրականացվող դաստիարակչական ներգործությունն ապահովող արդի մեթոդներից են՝

- ✓ դաստիարակության հուզական-պատկերավոր ներգործության մեթոդները,
- ✓ դաստիարակության բովանդակային հիմքի ստեղծման մեթոդները,
- ✓ գնահատող դատողությունների ձևավորման մեթոդը,

  որոնք իրականացվում են՝

  - բանավոր և պատկերավոր խոսքի, այուժետային պատմվածքի կամ հուզական նկարագրության միջոցով,
  - նկարի, տեսաշարի, պատմական ուղղվածության փաստավավերագրական կամ գեղարվեստական ֆիլմի, պատմավեպի, բանաստեղծության, երաժշտական ստեղծագործության կամ կտավի դիտման, ընթերցման և քննարկման միջոցով,
  - բանավեճի միջոցով:

Ի. Դ. Կովալչենկոն պատմական գիտելիքները ներկայացնելու հիմնական մեթոդների թվում նշում է՝

- ✓ պատմագենետիկականը (նկարագրական-փաստական բնույթ կրող),
- ✓ հետհայեցողականը (պատմական ճանաչողությունը. դասավանդողը պատմական գիտելիքներ փոխանցելիս անցում է կատարում հետևանքից պատճառներին),
- ✓ պատմահամեմատականը (համադրել, համեմատել, ընդհանրացնել),
- ✓ պատմատիպաբանականը (դասակարգել, համակարգել, խմբավորել),
- ✓ պատմահամակարգայինը (արժևորել),
- ✓ եզրույթների վերլուծությունը:

Պատմության դասագործընթացում իրականացվող դաստիարակչական ներգործությունն ապահովող արդի տեխնոլոգիաներից արդյունավետ են՝

- ✓ կոլեկտիվ ստեղծագործական գործունեության,
- ✓ համագործակցային,
- ✓ ազատ դաստիարակության (անհատականացված),
- ✓ մանկավարժական աջակցության,
- ✓ բարոյական դաստիարակության տեխնոլոգիաները:

Ինքնաճանաչողության, ինքնագիտակցության, աշխարհի հետ արժանապատիվ հարաբերակցության, ապրելու, բարգավաճելու, հաղթելու համար համապատասխան գիտելիք է հարկավոր: Ասված է չէ՞, կա քարերը հավաքելու ժամանակը, կա քարերը նետելու ժամանակը: Ըստ այդմ էլ՝ կա գիտելիք ամբարելու ժամանակը, և կա գիտելիքը զենք դարձնելու ժամանակը: Արդ, ամենայն ժամ բազմապատկենք մեր գիտելիքը, որ ժամանակների հոլովույթում մշտատև դարձնենք մեր հպարտ գոյությունը:

Եզրակացություն

Հայրենիքը հավերժական արժեք է:

Գարեգին Նժդեհ

Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա ՀՀ ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, փորձը և անցյալի դասերը լավագույնս ծառայեցնել հզորության և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի և հայ ժողովրդի զբաղեցրած տեղի և դերի մասին: Հենց այս պատճառով է, որ կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը:

Ժամանակակից մտածողության շրջանակներում առկա բազմաթիվ տեսական և գործնական հայեցակարգերի վերլուծության, համադրման և սինթեզի արդյունքում կարող ենք փաստել, որ հայոց պատմության դասերին կրթության արդյունավետությունը պայմանավորված է ուսուցման և դաստիարակության արժեհամակարգի ձևավորմամբ: 21–րդ դարի սովորողին արդյունավետ կրթելը միտված է նրա մտավոր և հոգեբանական կառուցվածքի յուրահատկությունների զարգացմանն ու արժեհամակարգի կողմնորոշմանը: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված

կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:
Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ պետությունը պետք է երեխայի համար ստեղծի բարձր արժեքներ ապահովող կրթության պայմաններ, և արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է:
Պետք է ճշգրիտ և դիպուկ բնութագրական վերլուծություններով ու համադրություններով նորովի վերարժևորել և գնահատել ազգային գաղափարախոսության մաս կազմող մշակութային մնայուն արժեքները, հայոց ազգային հոգեկերտվածքի առանձնահատկությունները, որոնք ուրվագծում են սերնդի դաստիարակության և ազգային իղձերի իրականացման ուղիներ: Եվ այս ամենի պատասխանատուն սկսած պետությունից նրանք են, ովքեր լծված են սերնդի հայեցի դաստիարակության գործին՝ լինի դպրոցում թե ԲՈՒՀ-ում, կրթամշակութային որևէ հաստատությունում թե զորամասերում, Հայրենիքում թե Սփյուռքում:
Երկար թե կարճ, մեծ թե փոքր ամեն մի ճանապարհ կամ գործ սկսվում է առաջին քայլից: Սկսենք նաև մենք: Թեկուզ մեզ հետ տեղի ունեցածը հստակ պատկերացնելու, մեր պատմությունն ու մեզ ճանաչելու պարզ քայլից:
Արդ, ապավինենք խոսքին ու լույսին, փոխանցենք միմյանց մեր դարավոր զոյի ստեղծագործ ընթացքն ու այսօրվա վետվետումները, որ ջերմանան մեր միտքն ու հոգին, որ պայծառանան մեր օրերը ընթացիկ, որ գալիքն իրոք լինի իմաստավորված ու լուսավոր:
Հավատանք, որ կրթությունն է մեր անդավաճան առաջնորդը, և այսօր էլ բարձր արժեքային համակարգ ունեցող, կրթված, իրազեկ ու իրար հարգանքով վերաբերվող քաղաքացին է կանխորոշելու մեր ապագան:

Թողություն տուր, Տե՛ր, ծանրը Խավարին,
Միայն թե թող Նա թողնի հեռանա:
Պարույր Սևակ

Առաջարկություններ

Հայոց պատմության դասին ներկայացվող կարևորագույն պահանջ և յուրաքանչյուր դասի համար բնորոշ հատկանիշ պետք է լինի չափորոշչահեն ուսուցումը։

Պատմություն առարկայի որակի և արդյունավետության բարձրացման և սովորողների մոտ արժեհամակարգի ձևավորման նպատակով՝ կախված դասի թեմայից, նպատակներից ու խնդիրներից, դասարանի տարիքային առանձնահատկություններից, առկա հնարավորություններից և այլ հանգամանքներից, ինչպես նաև կատարած հարցումներից, առաջարկում եմ առավել հաճախ օգտագործել ուսուցման ներքոհիշյալ մեթոդները և կազմակերպել հաղորդակցման հետևյալ ձևերը.

1. Այցելություններ մշակութային օջախներ դասի համապատասխան թեմաներին զուգահեռ կամ որպես ամփոփիչ դաս (կարող են լինել նաև ինտեգրված դասեր). «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Շենգավիթ հնավայր, Կարմիր բլուր, Հայաստանի Պատմության թանգարան, Երևանի պատմության թանգարան, ՀՀ ՊՆ «Մայր Հայաստան» ռազմական պատմության թանգարան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր և Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, «Մեգերյան Կարպետ» ձեռագործ գորգերի գործարան, Արարատ թանգարան, Գաֆէսճեան արվեստի կենտրոն, Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոն, Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն, Սերգեյ Փարաջանովի թանգարան, Ֆրիտյոֆ Նանսենի թանգարան, Կարեն Դեմիրճյանի թանգարան, Կոմիտասի անվան պանթեոն, Եռաբլուր, Երևանի ժամանակակից արվեստի թանգարան, Մատենադարան, Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր և այլն։

2. Քաղաքային թեմատիկ տուրեր՝ դասն անցկացնել և ծանոթացնել պատմական կերպարներին նրանց արձանների տեղակայման վայրում. Հայկ Նահապետ, Տորք անգեղ, Արգիշտի 1-ին, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Մովսես Խորենացի, Գարեգին Նժդեհ, Զորավար Անդրանիկ, Գևորգ Չաուշ, Հովհաննես Բաղրամյան, Վիկտոր Համբարձումյան և այլն։

3. Այցելություններ վանական համալիրներ՝ հաղորդակից դարձնել և նպաստել աճող սերնդի ազգային-հոգևոր արժեքների ամբողջացմանն ու ամրապնդմանը (Էջմիածնի Մայր տաճար, Նորավանք, Տաթևի վանք, Զվարթնոց, Սանահին, Հաղպատ, Հաղարծին, Գոշավանք, Մակարավանք և այլն)։
4. Հայրենասիրական բնույթի արտադասարանական միջոցառումների կազմակերպում։
5. Նախագծային և հետազոտական աշխատանքների իրականացում՝ ամփոփիչ եզրակացությամբ (օր.՝ պատմական շրջադարձային իրադարձությունների վերաբերյալ)։
6. Փաստավավերագրական ֆիլմերի դիտում՝ պատմական իրադարձությունների վերաբերյալ. անգամ սովորողները կարող են հավաքել և կազմել պատմական ֆիլմերի մեդիադարան։
7. Հանդիպումների հաճախակի կազմակերպում ժամանակակից հերոսների հետ՝ նրանց սխրագործություններին ծանոթանալու նպատակով, որը կնպաստի հայրենասիրական արժեքների ամրապնդմանը և հայրենանվեր գործունեության ծավալմանը։
8. Գաղափարաբանական քննարկումների, կլոր սեղանների, բանավեճերի կազմակերպում, ինչպես միջառարկայական կապերի, այնպես էլ արդի ժամանակաշրջանի խնդիրների լուծման վերաբերյալ՝ օգտագործելով հետևյալ մեթոդները՝ բացատրական-ցուցադրական, ինֆորմացիոն-ռեցեպտիվ, վերարտադրողական, պրոբլեմային շարադրանք, մասնակի որոնողական և հետազոտական։

Մենք աշխարհի մի մասն ենք, ու ամբողջի ու նրա մասի հարաբերակցության բոլոր ձևերից պիտի փորձենք օգտվել խելամտորեն։ Աշխարհից մեկուսանալը անհնարին է։ Մեր մեծերը վաղուց են գտել աշխարհի հետ կապի ճշգրիտ բանաձևը, Ոսկեդարից էլ առաջ, ու դրանից հետո էլ. վերցրել են աշխարհից առաջավորը, նորը, յուրացրել, դրել ազգային հանդերձի մեջ ու հարստացրել են հայրենի ավանդները։

Ի վերջո՝

վերականգնի՛ր **հիշողությունդ**,

մի՛ փնովիր **երկիրդ ու պետությունդ**,

մի՛ մոռացիր, որ դու **տաղանդավոր** ես, կառուցի՛ր, արարի՛ր,

մի՛ երկնչիր դժվարություններից, չէ որ **հայ** ես,

ձեռնարկի՛ր **գործդ**, ի՛նքդ ստեղծիր աշխատատեղդ, աշխատադաշտդ,

մի՛ մոռացիր, որ դու **բարոյական** ես,

մի՛ մոռացիր, որ Դու **առաջինն** ես հավատացել **Աստծո Որդուն**,

մի՛ մոռացիր, որ Դու միշտ ապավինել ես **գիտելիքին**...

Մենք հայ ենք, Աստված մեզ **Հայաստան** երկիրն է տվել՝ որպես բնակավայր, որպես **հայրենիք**, որպես տուն։

Մեզ երկիր են վստահել և մեզանից յուրաքանչյուրն ունի պատասխանատվության իր բաժինը։ Ու մենք՝ այդ օդի, ջրի, գույնի, բույրի, արևի ու ստվերի ժառանգորդ ու տեր, ինքներս էլ նախ պիտի պահպանենք, ապա վստահենք, հավատանք ու ժառանգենք արդեն մեր ժառանգներին նախնիներից ստացած ողջ ամենաթանկը։

Ապավինենք մեր սեփական ուժերին, հայրենիքի ու սփյուռքի ամեն ձեռնարկ ու խնդիր լուծելիս միշտ միասին լինելու դիրքորոշմանը, ու չենք էլ նկատի, թե ինչպես կամբողջանա մեր կիսատված տունը, կշենանա մեր «Նոր հայրենիք, հզոր հայրենիքը...»։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչներ, 2021

2. Ա. Ղուկասյան՝ Հայոց պատմություն, Ուսուցչի ձեռնարկ (8-9-րդ դաս.), Երևան, 2013

3. Ա. Սարգսյան, Ա. Մալոյան՝ Հայոց պատմություն, Ուսուցչի մեթոդական ձեռնարկ, Երևան, 2009

4. Եվրոպայի խորհուրդ՝ «Կարողունակությունների կողմնորոշիչ շրջանակ՝ ժողովրդավարական մշակույթի համար», 2020

5. Արմինե Եփրիկյան՝ «Պատմության դասավանդման արդի մեթոդներ և տեխնոլոգիաներ», Երևան, 2021

6.Գագիկ Մինասյան՝ «Հայեցի դաստիարակության գաղափարաբանական նմուշներ», Երևան, 2011

7. Ա. Հ. Սարգսյան՝ «Մշակույթի տեսություն», Երևան, 2003

8. Ա. Գևորգյան՝ «Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում», Երևան, 2002

9. Յու. Բաբանսկի՝ «Աշակերտների դաստիարակությանը կոմպլեքսային մոտեցում», Երևան, 1981

10. Ա. Վ. Մուդրիկ՝ «Դպրոցականի անձը և նրա դաստիարակությունը կոլեկտիվում», Երևան, 1986